

## **«Ֆինանսների նախարարություն**

### **Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 18/6**

**12 մայիսի 2015 թ.**

Քննարկվեց «ՀԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության 20.04.2015 թ-ի գրությամբ բերված գանգատը «ՖՆ Մաշտոցի ՀՏ կողմից եկամտային հարկի գծով հաշվարկված տույժերը վերահաշվարկելու վերաբերյալ:

#### **«ՀԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության գանգատում բերված փաստարկները.**

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության (այսուհետ՝ Գլխավոր վարչություն) կողմից 2014 թվականի մայիսի 5-ին մեխանիկական սխալի հետևանքով կուտակային 900008047020 հաշվին կատարվել է փոխանցում 7.965.345 (յոթ միլիոն ինը հարյուր վաթսուհինգ հազար երեք հարյուր քառասունհինգ) դրամ (թեպետ վճարման հանձնարարագրի նպատակ դաշտում նշված է եղել ապրիլ ամսվա եկամտային հարկ, իսկ ստացողը դաշտում՝ Մաշտոցի հարկային տեսչություն), սակայն նշված գումարի չափով պետք է փոխանցումը կատարվեր եկամտային հարկի 900005600110 հաշվին:

Հաջորդ օրը, 2014 թ-ի մայիսի 6-ին թիվ 1.4/12.1/658-14 գրությամբ Գլխավոր վարչությունը դիմել է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ վերը նշված գումարի չափով վերաձևակերպման համար, սակայն պատասխան գրություն չի ստացվել, միայն բանավոր պատասխանվել է, որ վերաձևակերպում չի կատարվել, քանի որ վերաձևակերպման կարգը դեռևս սահմանված չէ:

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2014 թ-ի հոկտեմբերի 24-ի N 733-Ն հրամանով հաստատված կարգի համաձայն, Գլխավոր վարչությունը 2014 թ-ի դեկտեմբերի 25-ին և 2015 թ-ի փետրվարի 27-ին կրկին անգամ դիմել է Մաշտոցի տարածքային հարկային տեսչություն կուտակային վճարի գերավճարը վերաձևակերպելու համար: Գլխավոր վարչության անձնական հաշվի քարտին վերաձևակերպումը արտացոլվել է 2015 թ-ի մարտի 12-ին, որի արդյունքում «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի համաձայն այդ ողջ ժամանակահատվածի համար հաշվարկվել է տույժեր:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գլխավոր վարչությունը կատարել է բոլոր անհրաժեշտ գործողությունները ժամանակին վերաձևակերպում կատարելու համար, գանգատաբերը խնդրում է հարցը քննարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովում և կատարել հաշվարկված տույժերի վերահաշվարկ:

#### **«Ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

«ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «ՀԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության կողմից 2014 թ-ի մայիսի 5-ին թիվ 900005600110 հաշվեհամարին 7.965.345 դրամ եկամտային հարկի փոխանցում կատարելու փոխարեն, նշված գումարը թյուրիմացաբար փոխանցվել է կուտակային թիվ 900008047020 հաշվեհամարին: Ընդ

որում, վճարման հանձնարարագրի «նպատակը» դաշտում փոխանցման նպատակը նշվել է ապրիլ ամսվա եկամտային հարկ, իսկ «ստացող»-ը դաշտում՝ Մաշտոցի հարկային տեսչություն:

Հաջորդ օրը՝ 2014 թ-ի մայիսի 6-ին, Գլխավոր վարչությունը թիվ 1.4/12.1/658-14 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն և խնդրել վերը նշված գումարի չափով կատարել վերաձևակերպում, սակայն վերաձևակերպում չի կատարվել, քանի որ համապատասխան կարգը դեռևս սահմանված չի եղել:

ՀՀ ֆինանսների նախարարի 2014 թ-ի հոկտեմբերի 24-ի N 733-Ն հրամանով հաստատված կարգի համաձայն Գլխավոր վարչությունը 2014 թ-ի դեկտեմբերի 25-ին և 2015 թ-ի փետրվարի 27-ին կրկին անգամ դիմել է Մաշտոցի հարկային տեսչություն կուտակային վճարի գերավճարը վերաձևակերպելու համար, սակայն վերաձևակերպումը կատարվել է միայն 2015 թ-ի մարտի 12-ին: Արդյունքում, 2014 թ-ի մայիսի 5-ից մինչև 2015 թ-ի մարտի 12-ն ընկակած ժամանակահատվածի համար հիմք ընդունելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի դրույթները եկամտային հարկի գծով հաշվարկվել են տույժեր՝ գումարով 1.992.545 դրամ:

Քննարկվող դեպքում 7.965.345 դրամը եկամտային հարկի համապատասխան հաշվեհամարին փոխանցվելու փոխարեն, այն թյուրիմացաբար փոխանցվել է կուտակային հաշվեհամարին: Այսինքն, տեղի ունեցածը զուտ մեխանիկական սխալի արդյունք է, ինչի մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ վճարման հանձնարարագրի «նպատակը» դաշտում փոխանցման նպատակը նշվել է ապրիլ ամսվա եկամտային հարկ, իսկ «ստացող» դաշտում՝ Մաշտոցի ՀՏ:

Տվյալ դեպքում հարկ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ գանգատաբերը վերոգրյալ փոխանցումը կատարելու հարջորդ օրը դիմել է վարչական մարմնին վերաձևակերպում կատարելու համար, սակայն համապատասխան կարգի բացակայության հետևանքով (կարգը հաստատվել է ՀՀ ֆինանսների նախարարի 2014 թ-ի հոկտեմբերի 24-ի թիվ 733-Ն հրամանով) վերաձևակերպումը կատարվել է միայն 2015 թ-ի մարտի 12-ին: Տվյալ դեպքում գանգատաբերը կատարել է բոլոր անհրաժեշտ գործողությունները ժամանակին վերաձևակերպում կատարելու համար և վերաձևակերպում կատարելու վերաբերյալ կարգի առկայության պայմաններում գանգատաբերը կխուսափեր նման չափի հարկային պարտավորություններից: Այսինքն, կարելի է փաստել, որ կատարվածի մեջ, ըստ էության, բացակայում է գանգատաբերի մեղքը:


Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության գանգատը ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ կողմից եկամտային հարկի գծով հաշվարկված տույժերը վերահաշվարկելու վերաբերյալ, ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության անձնական հաշվի քարտից նվազեցնել եկամտային հարկի գծով հաշվարկված տույժերը՝ գումարով 1.992.545 դրամ:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ